

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒԷՄԻ 31-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ «ՈՌՈԳՄԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՐԱՏԱՊ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

8 սեպտեմբերի 2009թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ.Նովիհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասրանի Նանրապետության փարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հուլիսի 31-ին ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Ոռոգման համակարգերի վերականգնման հրապրապ ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ ՆՆ սահմանադրական դատարան 05.08.2009թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հեղափոխելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Նամաձայնագիրն ստորագրվել է 2009թ. հուլիսի 31-ին՝ ընտրված քարածքներում ոռոգման ջրի օգտագործման արդյունավետության բարելավման եւ գյուղական շրջաններում անմիջական զբաղվածության խթանման նպատակով: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 30000000 /երեսուն միլիոն/ ԱՄՆ դոլար: Ծրագիրը բաղկացած է երկու մասից՝ առաջին մասով նախատեսվում է Թալինի եւ Արմավիրի ոռոգման համակարգերի գլխավոր ջրանցքների վերականգնում, երկրորդ մասով՝ Ծրագրի կառավարում եւ ինստիտուցիոնալ գործողություններ:

2. Նամաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում երեք ներդիր եւ մեկ հավելված, որոնցում սահմանված են ծրագրի նկարագրությունը, ծրագրի իրականացման կարգը, փոխառության մարման ժամանակացույցը, սահմանումները եւ ընդհանուր պայմանների փոփոխությունները:

3. Նամաձայնագրով սահմանված են տրամադրվող ֆինանսավորման մասհանման կարգը, վճարման ենթակա սկզբնական վճարի չափը, տոկոսագումարի դրույքաչափը եւ վճարման ամսաթվերը, փոխառության մայր գումարի վերադարձման կարգը:

4. Նամաձայնագրով Նայասպանի Նանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- հայտարարել Ծրագրի նպատակների նկատմամբ իր պարտավորվածության մասին եւ իրականացնել այն համաձայնագրի դրույթներին համապատասխան,

- նշանակել ԾԻԳ, որը պարասխանատու կլինի գնումների պլանավորման, մոնիթորինգի եւ հաշվետվությունների, վճարումների եւ ներքին ֆինանսական հսկողության, Ծրագրի հաշիվները վարելու եւ Ծրագրի հաշվետվությունները պարաստելու համար, եւ ապահովել, որ ԾԻԳ-ը միշտ ունենա համապատասխան աշխատակազմ եւ միջոցներ՝ կատարելու Ծրագրի իրականացման իր պարտավորությունները,

- արդիականացնել եւ պահպանել Գործառնական ձեռնարկը՝ մյուս կողմի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ, պատշաճ կերպով կատարել

Գործառնական ձեռնարկի ներքո իր բոլոր պարտավորությունները եւ առանց մյուս կողմի նախնական համաձայնության չփոփոխել, անվավեր չճանաչել կամ չիրաժարվել Գործառնական ձեռնարկից,

- մինչեւ Ծրագրի ավարտը պահպանել ԶՕԸ-ների օժանդակության թիմը,
- երաշխավորել փարեկան բյուջեում ոռոգման համակարգերի պահպանման համար համարժեք միջոցների առկայությունը,
- ապահովել Ծրագրի իրականացումը Նակարհույցիոն ուղեցույցի դրույթների համաձայն,
- Ծրագրի միջոցառումների նկատմամբ կիրառել Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուսումնասիրության եւ Վերաբնակեցման քաղաքականության փաստաթղթում սահմանված չափորոշիչները, քաղաքականությունը, ընթացակարգերն ու մեխանիզմները,
- ապահովել Ծրագրի առաջին մասով իրականացվող միջոցառումների համապարասխանությունը մյուս կողմի համար ընդունելի բնապահպանական նորմերին եւ ուղեցույցներին,
- իրականացնել Ծրագրի առաջընթացի հսկողությունն ու գնահատումը եւ պարտավորվել Ծրագրի մասին հաշվետվություններ, Ծրագրի իրականացման մասին հաշվետվությունը եւ պահանջվող համապարասխան պլանը ներկայացնել մյուս կողմին ոչ ուշ, քան փակման ժամկետից վեց ամիս անց,
- վարել կամ հանձնարարել վարել ֆինանսական կառավարման համակարգ,
- պարտավորվել եւ յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ օր անց մյուս կողմին ներկայացնել միջանկյալ, աուդիտի չենթարկված Ծրագրի եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները,
- ապահովել, որպեսզի ՆՏ-ի ֆինանսական հաշվետվությունները ենթարկվեն աուդիտի, ինչպես նաեւ դրանք ներկայացնել մյուս կողմին համաձայնագրով սահմանված ժամկետում,
- ապահովել փոխառության միջոցներից ֆինանսավորվող բոլոր ապրանքների եւ աշխատանքների ձեռքբերման համապարասխանությունը համաձայնագրի դրույթներին,
- բացառությամբ համաձայնագրով նախատեսված դեպքերի՝ ապրանքներն ու աշխատանքները գնել Միջազգային մրցակցային սակարկությունների հիման վրա

կնքվող պայմանագրերով, իսկ խորհրդարանների ծառայությունները՝ Որակի եւ գնի վրա հիմնված ընտրության հիմունքներով կնքվող պայմանագրերով:

5. Նամաձայնագրով սահմանված են նաեւ գնումների եւ խորհրդարավական ծառայությունների իրականացման կարգը, գնման մեթոդները, խորհրդարանների ծառայությունների գնման առանձին մեթոդները, փոխառության միջոցների մասհանման ընդհանուր կարգը, պայմանները եւ ժամանակաշրջանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հուլիսի 31-ին ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Ոռոգման համակարգերի վերականգնման հրապարակային ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապարասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ